ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2016 թվականի **թիվ 37** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության

մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) 30-րդ կետին համապատասխան եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս ազգային մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությունը.

«Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում ու վարում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Սահմանել, որ սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց տեղադրման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 10-ի
թիվ 37 որոշմամբ

# ԿԱՆՈՆՆԵՐ

## «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում ու վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

«Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի շասսիի անձնագրի) եւ ինքնագնաց մեքենայի անձնագրի ու այլ տեսակի տեխնիկայի անձնագրի միասնական ձեւերի ներդրման եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագիր.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրման մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 1-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի)

ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորման ու վարման կարգը հաստատելու մասին» թիվ 112 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման մասին հիմնադրույթը հաստատելու մասին» թիվ 125 որոշում:

## II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնները մշակված են «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակով:

3. Սույն կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը հսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

## III. Հիմնական հասկացությունները

4. Սույն կանոնների նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

«միասնական ռեեստր»՝ Միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստր.

«պատմական տվյալներ»՝ տեղեկատվություն, որը պահվում է միասնական ռեեստրում՝ դրա ձեւավորման պահից, եւ որի մեջ փոփոխությունների կատարում չի նախատեսվում.

«ազգային մարմին»՝ Միության անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որը լիազորված է միասնական ռեեստրի ազգային մասը վարելու եւ միասնական ռեեստր ձեւավորելու նպատակով միասնական ռեեստրի ազգային մասից Եվրասիական տնտեսական հանձնաժողով տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաեւ միասնական ռեեստրից տեղեկություններ օգտագործելու համար.

Սույն կանոններում օգտագործվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական

տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

IV. Ընդհանուր գործընթացի մասին հիմնական տեղեկություններ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ, ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.TS.06, տարբերակ՝ 1.0.0:

1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակն է միասնական ռեեստրից տեղեկությունների ձեւավորման եւ ընդհանուր գործընթացի մասնակիցներին ներկայացման մեխանիզմների իրագործումը:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետեւյալ խնդիրները՝

ա) ապահովել ազգային մարմինների կողմից Միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային

միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների (այսուհետ համապատասխանաբար՝ լիազորված մարմիններ (կազմակերպություններ) արտադրող-կազմակերպություններ) մասին տեղեկությունները միասնական ռեեստրի ազգային մասում ներառելու, միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունները հանելու, ինչպես նաեւ միասնական ռեեստրի ազգային մասերում պարունակվող տեղեկությունները փոփոխելու մասին տեղեկատվությունը ներկայացնելը Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

բ) ապահովել Հանձնաժողովում ազգային մարմինների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա միասնական ռեեստրի ավտոմատացված ձեւավորումը եւ Միության տեղեկատվական պորտալում դրա հրապարակումը.

գ) իրագործել միասնական ռեեստրում ներառված լիազորված մարմինների (կազմակերպությունների), արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկությունները ազգային մարմիններ ներկայացնելու մեխանիզմը՝ արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի օգտագործման միջոցով.

դ) իրագործել միասնական ռեեստրում ներառված լիազորված մարմինների, արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկությունները տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների) էլեկտրոնային անձնագրերի եւ ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին (այսուհետ՝ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ) ներկայացնելու մեխանիզմը՝ արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգն օգտագործելու միջոցով.

ե) ապահովել արտաքին տեղեկատվական համակարգերով հարցման դեպքում Միության տեղեկատվական պորտալում զետեղված ծառայությունների օգտագործմամբ միասնական ռեեստրից տեղեկությունները ներկայացնելը:

## 2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

### Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկ

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.ACT.001 | Հանձնաժողով | Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումը, որը պատասխանատու է միասնական ռեեստրի ազգային մասերից տեղեկություններ ընդունելու եւ մշակելու, ինչպես նաեւ նշված տեղեկությունները միասնական ռեեստրում ներառելու համար |
| P.TS.06.ACT.001 | ազգային մարմին | միասնական ռեեստրի ազգային մասը վարելու եւ միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունները Հանձնաժողով ներկայացնելու լիազորված անդամ պետության գործադիր իշխանության մարմին՝ միասնական ռեեստր ձեւավորելու, ինչպես նաեւ միասնական ռեեստրից տեղեկությունները օգտագործելու նպատակով |
| P.TS.06.ACT.002 | էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ | տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների) էլեկտրոնային անձնագրերի եւ ինքնագնաց մեքենաների ու տեխնիկայի այլ տեսակների էլեկտրոնային անձնագրերի համակարգերի նախագծման գործողությունները համակարգող, ինչպես նաեւ միասնական ռեեստրից տեղեկություններ օգտագործող կազմակերպություն |
| P.TS.06.ACT.003 | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ | միասնական ռեեստրից տեղեկություններ օգտագործող ազգային մարմին (P.TS.06.ACT.001) |

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| | | կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ (P.TS.06.ACT.002) |
| P.TS.06.ACT.004 | շահագրգիռ անձ | իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը միասնական ռեեստրում տեղեկությունների հարցում է կատարում եւ դրանից տեղեկություններ ստանում |

## 3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ընթացակարգերի՝ ըստ իրենց նշանակության խմբավորված ամբողջություն է՝

ա) միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգեր.

բ) ազգային մարմիններ եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացման ընթացակարգեր.

գ) միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգեր.

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս իրականացվում է ազգային մարմիններից ստացված՝ միասնական ռեեստրի ազգային մասերից տեղեկությունների հիման վրա միասնական ռեեստրի ձեւավորում, ինչպես նաեւ ազգային մարմիններ, էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին եւ շահագրգիռ անձանց միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացում:

Միասնական ռեեստրը ձեւավորելիս եւ վարելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված հետեւյալ ընթացակարգերը՝

միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում.

միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում.

միասնական ռեեստրից տեղեկությունների հանում:

Ազգային մարմիններ կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին տեղեկատվություն ներկայացնելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ ազգային մարմիններին եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացման ընթացակարգերի խմբում ներառված հետեւյալ ընթացակարգերը՝

միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում.

միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում.

միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում:

Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելիս կատարվում է շահագրգիռ անձանց միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացման ընթացակարգերի խմբում ներառված՝ Միության տեղեկատվական պորտալի միջոցով միասնական ռեեստրից տեղեկությունների ստացման ընթացակարգը:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:




Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը, այդ թվում՝ գործառնությունների մանրամասն նկարագրությունը, բերված է սույն կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում են ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջեւ առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

## 4. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խումբը

15. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի կատարումն սկսվում է միասնական ռեեստրի ազգային մասում պարունակվող տեղեկությունները փոփոխելու (ավելացնելու, հանելու) մասին տեղեկատվությունն ընդհանուր գործընթացի մասնակցի կողմից ստանալու պահից։

Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերը կատարելիս ազգային մարմինը միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելու պահին ձեւավորում եւ Հանձնաժողով է ներկայացնում այդ փոփոխությունների մասին տեղեկություններ։ Նշված տեղեկությունները ներկայացվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մայիսի 10-ի թիվ 37 որոշմամբ հաստատված՝ ազգային մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության մասին կանոնակարգին համապատասխան (այսուհետ՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ)։ Ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների

անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մայիսի 10-ի թիվ 37 որոշմամբ հաստատված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրություն):

Միասնական ռեեստրի ազգային մասում լիազորված մարմնի (կազմակերպության) կամ արտադրող-կազմակերպության մասին տեղեկություններ ներառելիս կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը (P.TS.06.PRC.001):

Միասնական ռեեստրի ազգային մասում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները փոխանցելիս (միասնական ռեեստրում ներառելու ժամանակ հայտագրված՝ լիազորված մարմնի (կազմակերպության) կամ արտադրող-կազմակերպության մասին տեղեկությունները փոփոխելու դեպքում) կատարվում է «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.TS.06.PRC.002):

Լիազորված մարմինը (կազմակերպությունը) կամ արտադրող-կազմակերպությանը միասնական ռեեստրի ազգային մասից հանելու մասին տեղեկություններ փոխանցելիս կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգը (P.TS.02.TRN.003):

16. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:




Նկ. 2. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

17. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 13

Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.PRC.001 | միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում | ընթացակարգի կատարման ընթացքում ազգային մարմնի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկություններ |

| | | |
|---|---|---|
| P.TS.06.PRC.002 | միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում | ընթացակարգի կատարման ընթացքում ազգային մարմնի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով տեղեկություններ են ներկայացվում միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար |
| P.TS.06.PRC.003 | միասնական ռեեստրից տեղեկությունների հանում | ընթացակարգի կատարման ընթացքում ազգային մարմնի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով տեղեկություններ են ներկայացվում միասնական ռեեստրից լիազորված մարմինը (կազմակերպությունը) կամ արտադրող-կազմակերպությունը հանելու մասին |

### 5. Ազգային մարմիններին եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խումբ

18. Ազգային մարմիններ եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացման ընթացակարգերը կատարվում են ազգային մարմինների տեղեկատվական համակարգերից կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչից համապատասխան հարցում ստանալու դեպքում:

Ազգային մարմիններին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացման ընթացակարգերի կատարման շրջանակներում մշակվում են հարցումների հետեւյալ տեսակները՝

միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում.

միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում.

միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցում.

Նշված տեղեկությունների ներկայացումն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մայիսի 10-ի թիվ 37 որոշմամբ հաստատված՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության մասին կանոնակարգին կամ Էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության մասին կանոնակարգին համապատասխան (այսուհետ՝ «Էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության մասին» կանոնակարգ)։

Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցումը կատարվում է ազգային մարմինների կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի տեղեկատվական համակարգերում պահվող՝ միասնական ռեեստրում ներառված լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկությունները միասնական ռեեստրում պարունակվող ու Հանձնաժողովում պահվող տեղեկությունների հետ սինքրոնացնելու անհրաժեշտությունը գնահատելու նպատակով։ Հարցումն իրականացնելիս կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման օրվա եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.004)։

Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցումը կատարվում է Հանձնաժողովում պահվող՝ միասնական ռեեստրում ներառված լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկություններն ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից ստանալու նպատակով: Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները հարցվում են կամ ամբողջ ծավալով (հաշվի առնելով պատմական տվյալները) կամ որոշակի օրվա կամ ժամի դրությամբ: Միասնական ռեեստրից տեղեկությունների՝ ամբողջ ծավալով հարցումն օգտագործվում է լիազորված մարմինների (կազմակերպությունների), արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկությունների՝ տեղեկատվական համակարգում սկզբնական բեռնման ժամանակ, օրինակ՝ ընդհանուր գործընթացը մեկնարկելիս, ընդհանուր գործընթացի նոր մասնակցի կողմից դրան միանալիս, խափանումից հետո տեղեկատվությունը վերականգնելիս: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.005):

Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցման դեպքում ներկայացվում են այն տեղեկությունները, որոնք ավելացվել են միասնական ռեեստրում կամ որոնցում կատարվել են փոփոխություններ՝ սկսած հարցման մեջ նշված պահից մինչեւ այդ հարցումը կատարելու պահը: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.006):

19. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները ազգային մարմիններին եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ներկայացնելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 3–րդ նկարում:




Նկ. 3. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններն ազգային մարմիններ եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ներկայացնելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

20. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններն ազգային մարմիններ եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3–րդ աղյուսակում:

Աղյուսակ 18

Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններն ազգային մարմիններ եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
| --- | --- | --- |
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.PRC.004 | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում | ընթացակարգը նախատեսված է հարցման նախաձեռնողի տեղեկատվական համակարգում պահվող՝ միասնական ռեեստրում ընդգրկված լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկությունները միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների հետ սինքրոնացման անհրաժեշտությունը ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից գնահատվելու համար |
| P.TS.06.PRC.005 | միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում | ընթացակարգը նախատեսված է միասնական ռեեստրից տեղեկություններ ստանալու համար |
| P.TS.06.PRC.006 | միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում | ընթացակարգը նախատեսված է ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի տեղեկատվական համակարգում պահվող՝ միասնական ռեեստրում ընդգրկված լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկությունները միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների հետ սինքրոնացնելու համար |

6. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խումբ

21. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերը կատարվում են Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ:

Միության տեղեկատվական պորտալի միջոցով տեղեկություններ ներկայացնելիս օգտագործվում են այդ պորտալի վեբ–միջերեսը կամ այդ պորտալում տեղադրված ծառայությունները: Վեբ–միջերեսն օգտագործելիս օգտատերը բրաուզերի (դիտարկիչի) պատուհանում սահմանում է միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները որոնելու եւ (կամ) ներբեռնելու պարամետրերը, աշխատում դիտարկիչի պատուհանում ներկայացված՝ միասնական ռեեստրից տեղեկատվության հետ:

Միության տեղեկատվական պորտալում զետեղված ծառայություններն օգտագործելիս փոխգործակցությունն իրականացվում է շահագրգիռ անձի տեղեկատվական համակարգի եւ Միության տեղեկատվական պորտալի միջեւ:

22. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 4–րդ նկարում:




Նկ. 4. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեմա

23. Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 4–րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.PRC.007 | միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում՝ Միության տեղեկատվական պորտալի միջոցով | ընթացակարգը նախատեսված է միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց կողմից Միության տեղեկատվական պորտալի միջոցով ստանալու համար՝ վեբ–միջերեսի կամ Միության տեղեկատվական պորտալում զետեղված ծառայությունների օգտագործմամբ |

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

24. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց մասին կամ որոնցից տեղեկությունները տեղեկատվական փոխգործակցության ընթացքում փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջեւ, բերված է 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5

Տեղեկատվական օբյեկտների ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.BEN.001 | միասնական ռեեստրի ազգային մաս | ազգային մարմինների կողմից Հանձնաժողով ներկայացվող՝ միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկություններ |
| P.TS.06.BEN.002 | միասնական ռեեստր | միասնական ռեեստրում ընդգրկված լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ արտադրող-կազմակերպությունների մասին տեղեկություններ |

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

25. Հանձնաժողովի՝ տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին տեղեկությունների ժամանակին ու ամբողջական փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկելն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29–ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող մյուս միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ ազգային մարմինների պաշտոնատար անձանց եւ աշխատակիցներին՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուներն ու դասակարգիչները

26. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 22

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Տեսակը | Նկարագրությունը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| P.CLS.008 | կապի տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է կապի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (ներդաշնակեցված է ՄԱԿ ԱԷՊԿ-ի «Communication Channel Code» դասակարգչի հետ) |
| P.CLS.009 | չափման միավորների միջազգային դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է չափման միավորների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի թիվ 20 հանձնարարականին համապատասխան |
| P.CLS.019 | աշխարհի երկրների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է աշխարհի երկրների ծածկագրերն ու անվանումները՝ ISO 3166-1 ստանդարտին համապատասխան |
| P.CLS.024 | լեզուների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է լեզուների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ISO 639-1 ստանդարտին համապատասխան |
| P.CLS.048 | հասցեների տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է հասցեների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը |
| P.CLS.053 | էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների ծածկագրերի ու անվանումների ցանկը |

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Տեսակը | Նկարագրությունը |
|---|---|---|---|
| P.CLS.057 | համապատասխանության գնահատման մասին փաստաթղթերի տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է համապատասխանության գնահատման մասին փաստաթղթերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը |
| P.CLS.059 | տեխնիկական կանոնակարգման օբյեկտների տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է տեխնիկական կանոնակարգման օբյեկտների ծածկագրերի եւ անվանումների ցանկը |
| P.CLS.068 | տնտեսավարող սուբյեկտների նույնականացման մեթոդների տեղեկատու | տեղեկատու | պարունակում է տնտեսավարող սուբյեկտների նույնականացման մեթոդների նույնացուցիչների եւ անվանումների ցանկը |
| P.TS.06.CLS.001 | տրանսպորտային միջոցների անձնագրերի տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է տրանսպորտային միջոցների անձնագրերի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը |
| P.TS.06.CLS.002 | տրանսպորտային միջոցների անձնագրերի ձեւակերպում իրականացնող կազմակերպությունների տեսակների դասակարգիչ | դասակարգիչ | պարունակում է տրանսպորտային միջոցների անձնագրերի ձեւակերպում իրականացնող կազմակերպությունների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը |

## VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

### 1. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերը

### «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգ (P.TS.06.PRC.001).

27. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.06.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում:




Նկ. 5. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.06.PRC.001) կատարման սխեման

28. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» (P.TS.06.PRC.001) ընթացակարգը կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում ազգային մարմնի կողմից տեղեկությունները ներառելու դեպքում

29. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.06.OPR.001), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով տեղեկություններ են ներկայացվում լիազորված մարմնի (կազմակերպության) կամ արտադրող-կազմակերպության մասին՝ միասնական ռեեստրում ներառելու համար:

30. Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.002), որի կատարման արդյունքներով միասնական ռեեստրում են ներառվում լիազորված մարմնի (կազմակերպության) կամ արտադրող-կազմակերպության մասին տեղեկություններ: Միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցումը փոխանցվում է ազգային մարմնին:

31. Ազգային մարմնի կողմից՝ միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցում ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.06.OPR.003), որի կատարման արդյունքներով իրականացվում է նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

32. «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.002) կատարելու դեպքում՝ կատարվում է «Միասնական ռեեստրի հրապարակում» գործառնությունը (P.TS.06.OPR.004), որի կատարման արդյունքներով թարմացված միասնական ռեեստրը հրապարակվում է Միության տեղեկատվական պորտալում:

33. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.06.PRC.001) կատարման արդյունքներն են լիազորված մարմնի (կազմակերպության) կամ արտադրող-կազմակերպության ներառումը միասնական ռեեստրում եւ միասնական ռեեստրի հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

34. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.06.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 26

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.06.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.OPR.001 | միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում | բերված է սույն կանոնների 8-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.002 | միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում և մշակում | բերված է սույն կանոնների 9-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.003 | միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում | բերված է սույն կանոնների 10-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.004 | միասնական ռեեստրի հրապարակումը | բերված է սույն կանոնների 11-րդ աղյուսակում |

Աղյուսակ 8

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.TS.06.OPR.001) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.001 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում տեղեկությունները ներառելիս |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ձեւավորում է Հանձնաժողովին փոխանցելու համար նախատեսված՝ միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները պարունակող հաղորդագրություն՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքներ | միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողովին |

Աղյուսակ 9

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.06.OPR.002) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.002 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում |

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.06.OPR.001)) |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն ազգային մարմինների կողմից: Էլեկտրոնային փաստաթուղթը (տեղեկությունները) պետք է համապատասխանի էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանների լրացմանը ներկայացվող՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը մշակում է լիազորված մարմնի (կազմակերպության) կամ արտադրող-կազմակերպության մասին ստացված տեղեկություններն ու դրանք ներառում է միասնական ռեեստրում, ձեւավորում եւ ազգային մարմին է ուղարկում միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցում՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները մշակվել են, միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցումն ուղարկվել է ազգային մարմին |

Աղյուսակ 10

«Միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում» գործառնության (P.TS.06.OPR.003) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.003 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում |

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 3 | Կատարողը | ազգային մարմին |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին կատարողի կողմից ծանուցում ստանալիս («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնություն (P.TS.06.OPR.002)) |
| 5 | Սահմանափակումները | ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ընդունում է ծանուցումը՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը մշակվել է |

Աղյուսակ 11

«Միասնական ռեեստրի հրապարակում» գործառնության

(P.TS.06.OPR.004) նկարագրություն

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.004 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրի հրապարակումը |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում տեղեկություններ ներառելիս («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.TS.06.OPR.002)) |
| 5 | Սահմանափակումները | կատարվում է միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները ստանալու եւ մշակելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում տեղեկությունների հրապարակումը |
| 7 | Արդյունքները | ներառված տեղեկությունները պարունակող միասնական ռեեստրը հրապարակված է Միության տեղեկատվական պորտալում |

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.TS.06.PRC.002)

35. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.06.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում:




Նկ. 6. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.06.PRC.002) կատարման սխեման

36. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.TS.06.PRC.002) կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում ազգային մարմնի կողմից փոփոխություններ կատարելիս

37. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.06.OPR.005), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները:

38. Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.006), որի կատարման արդյունքներով միասնական ռեեստրում թարմացվում են համապատասխան տեղեկությունները: Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումը փոխանցվում է ազգային մարմնին:

39. Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումն ազգային մարմնի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.06.OPR.007), որի կատարման ընթացքում իրականացվում է նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

40. «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.006) կատարելու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրից թարմացված տեղեկությունների հրապարակում» գործառնությունը (P.TS.06.OPR.008), որի կատարման արդյունքներով միասնական ռեեստրից թարմացված տեղեկությունները հրապարակվում են Միության տեղեկատվական պորտալում:

41. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.06.PRC.002) կատարման արդյունքներն են՝ Հանձնաժողովում միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունների մշակումը, միասնական ռեեստրում փոփոխությունների կատարումը եւ Միության տեղեկատվական պորտալում փոփոխված տեղեկությունների հրապարակումը:

42. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.06.PRC.002) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 12-րդ աղյուսակում:

Աղյուսակ 12

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.06.PRC.002) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.OPR.005 | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում | բերված է սույն կանոնների 13-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.006 | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում | բերված է սույն կանոնների 14-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.007 | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցման ստացում | բերված է սույն կանոնների 15-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.008 | միասնական ռեեստրից թարմացված տեղեկությունների հրապարակում | բերված է սույն կանոնների 16-րդ աղյուսակում |

Աղյուսակ 13

«Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.TS.06.OPR.005) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.005 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխություններ կատարելիս |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |

| | | |
|---|---|---|
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ձեւավորում է միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկություններ պարունակող հաղորդագրություն՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողովին |

Աղյուսակ 33

«Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.06.OPR.006) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.006 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.06.OPR.005)) |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն ազգային մարմինների կողմից: Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը փոփոխություններ է կատարում միասնական ռեեստրում եւ ազգային մարմին միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցում է ուղարկում՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները մշակվել են, միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումն ուղարկվել է ազգային մարմին |

Աղյուսակ 34

«Միասնական ռեեստրում տեղեկություններ կատարելու մասին ծանուցման ստացում» գործառնության (P.TS.06.OPR.007) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.007 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցման ստացում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումը կատարողի կողմից ստանալիս («Տեղեկությունների ընդունում ու մշակում միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար» գործառնություն (P.TS.06.OPR.006)) |
| 5 | Սահմանափակումները | ծանուցման ձևաչափը և կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի և տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ընդունում է ծանուցումը՝ ազգային մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումը մշակվել է |

Աղյուսակ 16

«Միասնական ռեեստրից թարմացված տեղեկությունների հրապարակում» գործառնության (P.TS.06.OPR.008) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.008 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից թարմացված տեղեկությունների հրապարակումը |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելիս («Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.006)) |
| 5 | Սահմանափակումները | կատարվում է միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները ստանալու եւ մշակելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում միասնական ռեեստրի թարմացված տեղեկությունների հրապարակումը |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից թարմացված տեղեկությունները հրապարակվել են Միության տեղեկատվական պորտալում |

«Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգ
(P.TS.06.PRC.003)

43. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.TS.06.PRC.003) կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում:




Նկ. 7. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.TS.06.PRC.003) կատարման սխեման

44. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգը (P.TS.06.PRC.003) կատարվում է միասնական ռեեստրից տեղեկությունները հանելիս:

45. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.06.OPR.009), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կողմից ձևավորվում և Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները:

46. Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ստացում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.010), որի կատարման արդյունքներով համապատասխան տեղեկությունները հանվում են միասնական ռեեստրից: Միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցումը փոխանցվում է ազգային մարմնին:

47. Միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցումն ազգային մարմնի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.06.OPR.011), որի կատարման արդյունքներով իրականացվում է նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

48. «Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.010) կատարելու դեպքում կատարվում է «Թարմացված միասնական ռեեստրի հրապարակում» գործառնությունը (P.TS.06.OPR.012), որի կատարման արդյունքներով թարմացված միասնական ռեեստրը հրապարակվում է Միության տեղեկատվական պորտալում:

49. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.TS.06.PRC.003) կատարման արդյունքներն են՝ միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին տեղեկատվության մշակումը Հանձնաժողովում, միասնական ռեեստրում համապատասխան փոփոխությունների կատարումը եւ թարմացված միասնական ռեեստրի հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

50. «Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.TS.06.PRC.003) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 17-րդ աղյուսակում:

Աղյուսակ 17

«Միասնական ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգի (P.TS.06.PRC.003) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկ

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.OPR.009 | միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացումը | բերված է սույն կանոնների 18-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.010 | միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունումն ու մշակումը | բերված է սույն կանոնների 19-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.011 | միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցման ստացումը | բերված է սույն կանոնների 20-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.012 | թարմացված միասնական ռեեստրի հրապարակումը | բերված է սույն կանոնների 21-րդ աղյուսակում |

Աղյուսակ 18

«Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.TS.06.OPR.009) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.009 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացումը |
| 3 | Կատարողը | ազգային մարմին |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունները հանելիս |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ձեւավորում է միասնական ռեեստրից հանելու համար տեղեկություններ պարունակող հաղորդագրությունը՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ |

| | | |
|---|---|---|
| | | տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողովին |

Աղյուսակ 19

«Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում և մշակում» գործառնության (P.TS.06.OPR.010) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.010 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում և մշակում |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.06.OPR.009)) |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձևաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի և տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն ազգային մարմինների կողմից: Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն ազգային մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը հանում է տեղեկությունները միասնական ռեեստրից, ձևավորում և ազգային մարմին է ուղարկում միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցում՝ ազգային մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները մշակվել են, միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցումն ուղարկվել է ազգային մարմին |

Աղյուսակ 20

«Միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցման ստացում» գործառնության (P.TS.06.OPR.011) նկարագրություն

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիր | P.TS.06.OPR.011 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցման ստացումը |
| 3 | Կատարողը | ազգային մարմին |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցումը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.TS.06.OPR.010)) |
| 5 | Սահմանափակումները | ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ընդունում է ծանուցումը՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից տեղեկությունները հանելու մասին ծանուցումը մշակվել է |

Աղյուսակ 40

«Թարմացված միասնական ռեեստրի հրապարակում» գործառնության (P.TS.06.OPR.012) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.012 |
| 2 | Գործառնության անվանումը | թարմացված միասնական ռեեստրի հրապարակումը |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրը թարմացնելիս («Միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.TS.06.OPR.010)) |

| | | |
|---|---|---|
| 5 | Սահմանափակումները | կատարվում է միասնական ռեեստրից հանելու համար տեղեկությունները ստանալու եւ մշակելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում թարմացված միասնական ռեեստրի հրապարակումը |
| 7 | Արդյունքները | թարմացված միասնական ռեեստրը հրապարակվել է Միության տեղեկատվական պորտալում |

## 2. Ազգային մարմիններին եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների ներկայացման ընթացակարգերը

### «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.004)

51. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.004) կատարման սխեման ներկայացված է 8-րդ նկարում:




Նկ. 8. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.004) կատարման սխեման

52. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.004) կատարվում է ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի տեղեկատվական համակարգում պահվող տեղեկությունների՝ Հանձնաժողովում պահվող տեղեկությունների հետ սինքրոնացման անհրաժեշտությունը գնահատելու նպատակով:

53. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում» գործառնությունը (P.TS.06.OPR.013), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով է ուղարկվում միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացման հարցումը:

54. Հանձնաժողովի կողմից միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում» գործառնությունը (P.TS.06.OPR.014), որի կատարման արդյունքներով ձեւավորվում եւ ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին է ներկայացվում միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվություն:

55. Միասնական ռեեստրի վերջին թարմացման օրվա եւ ժամի մասին տեղեկատվությունը ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման օրվա եւ ժամի մասին տեղեկատվության ընդունում ու մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.015):

56. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.004) կատարման արդյունքը ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվությունը ստանալն է:

57. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.004) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 22-րդ աղյուսակում:

Աղյուսակ 22

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.004) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.OPR.013 | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում | բերված է սույն կանոնների 23-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.014 | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության մշակումն ու ներկայացումը | բերված է սույն կանոնների 24-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.015 | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ընդունումն ու մշակումը | բերված է սույն կանոնների 25-րդ աղյուսակում |

Աղյուսակ 23

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում» գործառնության (P.TS.06.OPR.013) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.013 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է կատարողի տեղեկատվական համակարգում պահվող՝ միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվությունը Հանձնաժողովում պահվող՝ միասնական ռեեստրից համապատասխան տեղեկատվության հետ սինքրոնացման անհրաժեշտության դեպքում |
| 5 | Սահմանափակումները | հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ձեւավորում եւ Հանձնաժողով է ուղարկում միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվություն ստանալու հարցում՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվություն ներկայացնելու հարցումն ուղարկվել է Հանձնաժողով |

Աղյուսակ 24

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում» գործառնության (P.TS.06.OPR.014) նկարագրություն

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.014 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության մշակում ու ներկայացում |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվություն ներկայացնելու հարցումը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում» գործառնություն (P.TS.06.OPR.013)) |
| 5 | Սահմանափակումները | հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները հարցվում են միայն ազգային մարմինների կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն իրականացնում է ստացված հարցման մշակում, ձեւավորում եւ ուղարկում է հարցման պատասխանը՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին է ուղարկվել միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվություն պարունակող հաղորդագրություն |

Աղյուսակ 46

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.06.OPR.015) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.015 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ընդունումն ու մշակումը |
| 3 | Կատարողը | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրը թարմացնելու օրվա եւ ժամի մասին տեղեկատվություն պարունակող հաղորդագրությունը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրը թարմացնելու օրվա եւ ժամի մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում» գործառնություն (P.TS.06.OPR.014)) |
| 5 | Սահմանափակումները | ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն իրականացնում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին ստացված տեղեկատվության մշակում՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվությունը ստացվել է |

«Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգը

(P.TS.06.PRC.005)

58. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.005) կատարման սխեման ներկայացված է 9-րդ նկարում:




Նկ. 9. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.005) կատարման սխեման

59. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.005) կատարվում է ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից միասնական ռեեստրից տեղեկություններ ստանալու նպատակով:

60. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում» գործառնությունը (P.TS.06.OPR.016), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի

վարիչի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով է ուղարկվում միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման հարցում: Պայմանավորված տրված պարամետրերով՝ հնարավոր է ձեւավորել 2 տեսակի հարցում՝

միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններն ամբողջ ծավալով (հաշվի առնելով պատմական տվյալները) ստանալու հարցում,

որոշակի ամսաթվի դրությամբ տեղեկություններն ստանալու հարցում:

61. Հանձնաժողովի կողմից՝ միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման հարցում ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնությունը (P.TS.06.OPR.017), որի կատարման արդյունքներով ձեւավորվում եւ ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին են ուղարկվում հարցվող տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:

62. Միասնական ռեեստրից տեղեկությունները ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.018):

63. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.005) կատարման արդյունքը ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից միասնական ռեեստրից տեղեկությունները ստանալն է: Միասնական ռեեստրում հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության դեպքում ուղարկվում է այդպիսի տեղեկությունների բացակայության մասին ծանուցում:

64. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.005) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 26-րդ աղյուսակում:

Աղյուսակ 49

«Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.005) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.OPR.016 | միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում | բերված է սույն կանոնների 27-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.017 | միասնական ռեեստրից տեղեկությունների մշակում եւ ներկայացում | բերված է սույն կանոնների 28-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.018 | միասնական ռեեստրից տեղեկությունների ընդունում եւ մշակում | բերված է սույն կանոնների 29-րդ աղյուսակում |

Աղյուսակ 27

«Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում» գործառնության (P.TS.06.OPR.016) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.016 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրից տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում |
| 5 | Սահմանափակումները | հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ձեւավորում եւ Հանձնաժողով է ուղարկում միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման հարցում՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության |

| | | |
|---|---|---|
| | | կանոնակարգին համապատասխան: Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններն ամբողջ ծավալով (հաշվի առնելով պատմական տվյալները) ստանալու անհրաժեշտության դեպքում հարցման մեջ չեն նշվում արդիականացման ամսաթիվը եւ ժամը: Որոշակի ամսաթվի դրությամբ տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում հարցման մեջ նշվում են արդիականացման ամսաթիվը եւ ժամը: Որոշակի անդամ պետությունների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների ստացման անհրաժեշտության դեպքում հարցման մեջ նշվում են այդ անդամ պետությունների ծածկագրերը |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման հարցումն ուղարկված է Հանձնաժողով |

Աղյուսակ 28

«Միասնական ռեեստրից տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնության (P.TS.06.OPR.017) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.017 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից տեղեկությունների մշակում եւ ներկայացում |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու հարցումը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում» գործառնություն (P.TS.06.OPR.016)) |
| 5 | Սահմանափակումները | հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները հարցվում են միայն ազգային մարմինների կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը մշակում է հարցումը՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան, ձեւավորում եւ ազգային մարմին կամ |

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին է ներկայացնում միասնական ռեեստրից տեղեկությունները՝ հարցման մեջ նշված պարամետրերին համապատասխան: Միասնական ռեեստրից տեղեկությունների ամբողջ ծավալով հարցման դեպքում ներկայացվում են միասնական ռեեստրում պահվող բոլոր տեղեկությունները՝ ներառյալ պատմական տվյալները: Նշված ամսաթվի դրությամբ տեղեկությունների հարցման դեպքում ներկայացվում են միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունները՝ հարցման մեջ նշված ամսաթվի դրությամբ: Միասնական ռեեստրից տեղեկությունները ներկայացվում են բոլոր անդամ պետությունների մասով կամ հաշվի առնելով հարցման մեջ նշված անդամ պետությունների ծածկագրերը: Միասնական ռեեստրում հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության դեպքում ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ուղարկվում է նշված տեղեկությունների բացակայության մասին ծանուցում: |
| 7 | Արդյունքները | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ներկայացվել են միասնական ռեեստրից տեղեկություններ կամ ուղարկվել է հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում |

Աղյուսակ 51

«Միասնական ռեեստրից տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.06.OPR.018) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.018 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից տեղեկությունների ընդունում եւ մշակում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրից տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրից տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնություն (P.TS.06.OPR.017)) |

| | | |
|---|---|---|
| 5 | Սահմանափակումները | ներկայացված տեղեկությունների կամ ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողն ստանում է միասնական ռեեստրից տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը եւ մշակում է դրանք՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը մշակվել են |

«Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգ (P.TS.06.PRC.006)

65. «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.006) կատարման սխեման ներկայացված է 10-րդ նկարում:




Նկ. 10. «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.006) կատարման սխեման

66. «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.TS.06.PRC.006) կատարվում է ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից միասնական ռեեստրից այն տեղեկությունները ստանալու նպատակով, որոնց ավելացումը միասնական ռեեստրում կամ որոնցում փոփոխությունների կատարումը տեղի է ունեցել՝ սկսած հարցման մեջ նշված պահից մինչեւ այդ հարցումը կատարելու պահը: Ընթացակարգը կատարվում է, այդ թվում, եթե հայտնաբերվել է, որ ազգային մարմնում պահվող՝ միասնական ռեեստրից տեղեկությունների վերջին թարմացման ամսաթիվը եւ ժամը ավելի վաղ են, քան Հանձնաժողովում պահվող՝ միասնական ռեեստրից այն տեղեկությունների վերջին թարմացման ամսաթիվը եւ ժամը, որոնց մասին տեղեկատվությունը ստացվել է «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.004) կատարման արդյունքում:

67. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցում» գործառնությունը (P.TS.06.OPR.019), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից ձեւավորվում եւ Հանձնաժողով է ուղարկվում միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ներկայացման հարցումը։

68. Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ներկայացման հարցումը Հանձնաժողովի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում» գործառնությունը (P.TS.06.OPR.020), որի կատարման արդյունքներով ձեւավորվում ու ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին են ներկայացվում հարցման մեջ նշված օրվանից միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները կամ ուղարկվում է հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում։

69. Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկություններ կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից ստանալիս կատարվում է «Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.06.OPR.021), որի կատարման արդյունքներով ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ իրականացվում է միասնական ռեեստրից տեղեկությունների սինքրոնացում։

70. «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.006) կատարման արդյունքներ են ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից միասնական ռեեստրից տեղեկությունների

ստացումը եւ ազգային մարմնի կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ միասնական ռեեստրից տեղեկությունների սինքրոնացումը:

71. «Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.006) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 30-րդ աղյուսակում:

Աղյուսակ 30

«Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգի (P.TS.06.PRC.006) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկ

| Ծածկագրային նշագիրը | Անվանումը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| P.TS.06.OPR.019 | միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցում | բերված է սույն կանոնների 31-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.020 | միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում | բերված է սույն կանոնների 32-րդ աղյուսակում |
| P.TS.06.OPR.021 | միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության ընդունում եւ մշակում | բերված է սույն կանոնների 33-րդ աղյուսակում |

Աղյուսակ 31

«Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցում» ընթացակարգի (P.TS.06.OPR.019) նկարագրությունը:

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.019 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվություն ստանալու անհրաժեշտության դեպքում |
| 5 | Սահմանափակումները | հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ձեւավորում եւ Հանձնաժողով է ուղարկում միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ներկայացման հարցում՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան<br>Որոշակի անդամ պետությունների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ներկայացման անհրաժեշտության դեպքում հարցման մեջ նշվում են այդ պետությունների ծածկագրերը |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվություն ստանալու համար հարցումն ուղարկվել է Հանձնաժողով |

Աղյուսակ 32

«Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում» գործառնության (P.TS.06.OPR.020) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.020 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության մշակում եւ ներկայացում |
| 3 | Կատարողը | Հանձնաժողով |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվություն ներկայացնելու հարցումը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրում կատարված փոփոխության մասին տեղեկատվության հարցում» գործառնություն (P.TS.06.OPR.019)) |
| 5 | Սահմանափակումները | հարցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները հարցվում են միայն ազգային մարմինների կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի կողմից |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը մշակում է ստացված հարցումը՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ Էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան, ձեւավորում եւ ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին է ներկայացնում հարցման մեջ նշված ամսաթվից հետո միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը:<br>Միասնական ռեեստրից տեղեկությունները ներկայացվում են բոլոր անդամ պետությունների մասով կամ հաշվի առնելով հարցման մեջ նշված անդամ պետությունների ծածկագրերը: |
| 7 | Արդյունքները | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչին ուղարկվել են միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը |

Աղյուսակ 33

«Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.06.OPR.021) նկարագրությունը

| Թիվ ը/կ | Տարրի նշագիրը | Նկարագրությունը |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Ծածկագրային նշագիրը | P.TS.06.OPR.021 |
| 2 | Գործառնության անվանումը | միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մասին տեղեկատվության ընդունում եւ մշակում |
| 3 | Կատարողը | ազգային մարմին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչ |
| 4 | Կատարման պայմանները | կատարվում է միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկություններ պարունակող հաղորդագրությունը կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցումը կատարողի կողմից ստանալիս («Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնություն (P.TS.06.OPR.020)) |
| 5 | Սահմանափակումները | ներկայացված տեղեկությունների կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը |
| 6 | Գործառնության նկարագրությունը | կատարողը ստանում է միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում եւ մշակում է դրանք՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Միասնական ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկություններ ստանալիս միասնական ռեեստրից ստացված՝ փոփոխված տեղեկությունների կազմում առկա եւ կատարողի տեղեկատվական համակարգում բացակայող տեղեկությունները ներառվում են ազգային մարմնում պահվող՝ միասնական ռեեստրի տեղեկություններում. միասնական ռեեստրից ստացված՝ փոփոխված տեղեկությունների կազմում առկա եւ կատարողի տեղեկատվական համակարգում պահվող՝ միասնական ռեեստրի տեղեկություններում առկա տեղեկություններն արդիականացվում են (թարմացվում են) |
| 7 | Արդյունքները | միասնական ռեեստրից տեղեկությունները սինքրոնացված են կատարողի եւ Հանձնաժողովի միջեւ |

## IX. Արտակարգ իրավիճակներում գործողությունների կարգը

72. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս հնարավոր են բացառիկ իրավիճակներ, որոնց ժամանակ տվյալների մշակումը չի կարող անցկացվել սովորական ռեժիմով: Դա կարող է տեղի ունենալ տեխնիկական խափանումների, կառուցվածքային եւ տրամաբանական հսկողության սխալների առաջացման եւ այլ դեպքերում:

73. Ազգային մարմինը կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչը կառուցվածքային եւ ձեւաչափատրամաբանական հսկողության սխալների առաջացման դեպքում էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը եւ էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների լրացմանը ներկայացվող պահանջներին համապատասխանության մասով՝ ազգային մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչի եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան, իրականացնում է այն հաղորդագրության ստուգումը, որի առնչությամբ ստացվել է սխալի մասին ծանուցումը: Նշված փաստաթղթերի պահանջներին տեղեկությունների անհամապատասխանությունը հայտնաբերելու դեպքում ազգային մարմինը կամ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի վարիչն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում՝ հայտնաբերված սխալը սահմանված կարգով վերացնելու համար:

74. Անդամ պետությունները արտակարգ իրավիճակների կարգավորման նպատակով միմյանց եւ Հանձնաժողովին տեղեկացնում են անդամ պետությունների այն ազգային մարմինների մասին, որոնց իրավասության շրջանակներում գտնվում է սույն կանոններով նախատեսված պահանջների կատարումը, ինչպես նաեւ ներկայացնում են տեղեկություններ ընդհանուր գործընթացն իրագործելիս տեխնիկական աջակցություն ապահովելու համար պատասխանատու անձանց մասին:

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 10-ի
թիվ 37 որոշմամբ

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս ազգային մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը մշակվել է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

«Տրանսպորտային միջոցի անձնագրի (տրանսպորտային միջոցի շասսիի անձնագրի) եւ ինքնագնաց մեքենայի անձնագրի ու տեխնիկայի այլ տեսակների անձնագրի միասնական ձեւերի ներդրման եւ էլեկտրոնային անձնագրերի համակարգերի կազմակերպման մասին» 2014 թվականի օգոստոսի 15-ի համաձայնագիր.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրման մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 1-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի)

ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող-կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորման ու վարման կարգը հաստատելու մասին» թիվ 112 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման մասին հիմնադրույթը հաստատելու մասին» թիվ 125 որոշում:

## II. Կիրառության ոլորտը

2. Սույն կանոնակարգը մշակվել է ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների (կազմակերպությունների) եւ տրանսպորտային միջոցների (տրանսպորտային միջոցների շասսիների), ինքնագնաց մեքենաների եւ տեխնիկայի այլ տեսակների անձնագրերի (էլեկտրոնային անձնագրերի) ձեւակերպումն իրականացնող՝ տրանսպորտային միջոցներ (տրանսպորտային միջոցների շասսիներ), ինքնագնաց մեքենաներ եւ տեխնիկայի այլ տեսակներ արտադրող կազմակերպությունների միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) տրանզակցիաների կատարման կարգի եւ պայմանների, ինչպես նաեւ դրանք կատարելիս իրենց դերի միատեսակ ընկալումն ապահովելու նպատակով:

3. Սույն կանոնակարգով սահմանվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության իրագործմանն անմիջականորեն ուղղված՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների կատարման կարգին եւ պայմաններին ներկայացվող պահանջները:

4. Սույն կանոնակարգը կիրառվում է ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգի նկատմամբ հսկողության, ինչպես նաեւ այդ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչների նախագծման, մշակման եւ լրամշակման ժամանակ:

## III. Հիմնական հասկացությունները

5. Սույն կանոնակարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայման»՝ էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) տվյալների միավոր, որը որոշակի համատեքստում համարվում է անբաժանելի.

«ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտի վիճակ»՝ տեղեկատվական օբյեկտն իր կյանքի պարբերաշրջանի որոշակի փուլում բնութագրող հատկություն, որը փոփոխվում է ընդհանուր գործընթացի գործառնությունները կատարելիս:

Սույն կանոնակարգում օգտագործվող «նախաձեռնող», «սկզբնավորող գործառնություն», «ընդունող գործառնություն», «ռեսպոնդենտ», «ընդհանուր գործընթացի հաղորդագրություն» եւ «ընդհանուր գործընթացի տրանզակցիա» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9–ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մայիսի 10-ի

